«Նորժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը անգլերենի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Վեներա Մնացականյան

Ուսումնական հաստատություն՝ Ջրաշենի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Հետազոտության նպատակը..... 3
Ներածություն.....4
Գլուխ 1. Ի՞նչ է համագործակցային ուսուցումը: Ո՞րն է համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակը.....5

Գլուխ 2. Ինչպե՞ս ճիշտ կազմակերպել սովորողների համագործակցությունը օտար լեզվի դասերին, համախմբել տարբեր ընդունակություններով սովորողներին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ.....10

Եզրակացություն.....12

Գրականության ցանկ.....16

Հետազոտության նպատակը

Ինչպես ճիշտ կազմակերպել օտար լեզվի դասապրոցեսը, որպեսզի ուսումնառության ընթացքում յուրաքանչյուր սովորող կարողանա իր մեջ ձևավորել համագործակցային կարողություններ և հմտություններ, այսինքն՝

1. Աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,
2. սովորել և սովորեցնել
3. դրական հարաբերություններ ստեղծել, ձևավորել առողջ մրցակցություն:

Ներածություն

Արդի պայմաններում օտար լեզուների ուսուցումն ու ուսումնառությունը կենսական պահանջ են դառնում ժամանակակից մարդու համար: Օտար լեզվի ուսուցումը բարդ գործընթաց է և պայմանավորված է բազմաբնույթ գործոններով՝ ուսուցման նպատակով, բովանդակությամբ, սկզբունքներով, մեթոդներով, որոնք տեղ են գտել պետական Կրթակարգում, առարկայական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, դասագրքերում:

Հենվելով հաղորդակցականության սկզբունքի վրա՝ օտար լեզվի ուսումնասիրությունը պետք է նպաստի այդ լեզվով մտքեր փոխանակելուն, միմյանց հետ շփումներ ունենալուն, ի վերջո, խոսքային բոլոր տեսակների՝ գրելու, կարդալու, ունկնդրելու և խոսելու կարողությունները զարգացնելուն:

Ելնելով վերոհիշյալից՝ անհրաժեշտ է ուսուցման գործընթացը այնպես կազմակերպել, որ սովորողը կարողանա

- դառնալ սեփական ուսումնառության գործընթացի ակտիվ մասնակիցը,
- տիրապետելով լեզվի իմացության/իրազեկության տվյալ մակարդակին՝ յուրացրած լեզվական նյութը, խոսքային նմուշներն ու ռեպլիկները կիրառել գործնականում:

  Հաղորդակցվելիս՝ համապատասխան խոսքային իրադրություններում:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են,

· փոխազդեցությունը, փոխուսուցումը,

· սովորողի ակտիվությունը,

· համագործակցությունը,

· հետադարձ կապը և այլն:

Գլուխ 1. Ի՞նչ է համագործակցային ուսուցումը: Ո՞րն է համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակը:

Համագործակցային ուսուցումը մի տեխնոլոգիա է, որի միջոցով գերազանց հաղորդակցություն է ձևավորվում սովորողների միջև և ստեղծվում է ակտիվ թիմային աշխատանք: Համագործակցային ուսուցումը կատարվում է փոքր խմբերով, որտեղ տարբեր մակարդակի աշակերտներ են մասնակցում: Գաղտնիք չէ, որ թիմային աշխատանքն ունի դրական ազդեցություն սովորելու ժամանակ, քանի որ այն ստեղծում է մի միջավայր, որտեղ սովորողները սովորեցնում և բացատրում են միմյանց անհասկանալի երևույթները, հասկացությունները և այլն: Այն ամրապնդում է նոր տեղեկատվությունը կամ գիտելիքը և խրախուսում է աշակերտներին արժևորել թիմային աշխատանքը և հասնել առավել բարձր արդյունքների՝ ձևավորելով այնպիսի հմտություններ, որոնք կարևոր են հետագա մասնագիտական գործունեության համար: Նրանք դառնում են ավելի պատասխանատու, վերահսկում են ժամանակը, ավելի արդյունավետ են պլանավորում հետագա աշխատանքները: Թիմային աշխատանքի շնորհիվ աշակերտները զարգացնում են միմյանց հետ շփվելու և հաղորդակցվելու կարողությունները՝ օտար լեզվի դասավանդման կարևոր, եթե ոչ ամենակարևոր նպատակը: Ուսուցիչը պետք է խրախուսի խմբի բոլոր անդամների ակտիվ մասնակցությունը, օժանդակի սովորողներին անհրաժեշտության դեպքում: Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառումը ժամանակատար է: Երբեմն աշակերտները վիճաբանում են որոշումներ կայացնելիս, նրանց ընկալումները տարբեր են, արդյունքում ուսուցչի օգնությամբ հանգում են ճիշտ եզրակացության: Թիմային աշխատանքը, որը համագործակցային ուսուցման հիմնական ձևն է, օգնում է յուրացնել համեմատաբար բարդ լեզվական նյութեր, օրինակ՝ «Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք» թեման ուսումնասիրելիս, սովորողները թիմային աշխատանքով յուրացնում են այն՝ համեմատելով մայրենի լեզվի կամ այլ լեզվի հետ՝ միմյանց մանրակրկիտ բացատրելով:

Համագործակցային ուսուցման ժամանակ սովորողները, համագործակցելով փոքր խմբերով, ձևավորում են ընդհանուր հասկացություններ և հմտություններ: Աշակերտները համագործակցային միջավայրում են կառուցում իրենց հմտությունները՝ խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու և հարցեր տալու միջոցով: Համագործակցային ուսուցումն իրականանում է համագործակցային դասի միջոցով: Համագործակցային դասը մի գործընթաց է, որը հիմնականում կազմված է տրամաբանորեն իրար հաջորդող վարժություններից: Դրանց կատարման ընթացքում միասին սովորելով և փորձարկելով/կիրառելով սոցիալական, ինքնաճանաչման և մտածողության հմտություններ սովորողներն ակտիվորեն կառուցում են նոր գիտելիքներ և ձեռք են բերում ու զարգացնում նոր հմտություններ:

Դերախաղը՝ որպես ուսուցման ձև

Ստեղծագործական դերախաղը գիտելիքը կամ ընթերցածը անձնավորելու փորձ է: Դերախաղն արդյունավետ ձև է, որը խրախուսում է աշակերտներին ստանձնել դերեր՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեին տվյալ դերում կամ իրավիճակում հայտնվելու դեպքում:

Տարբեր իրավիճակային դերախաղերը օգնում են.

որոշումներ կայացնել, -

ներկայացում պատրաստել՝ տեքստերի բովանդակության հի- ման վրա, օրինակ՝ անգլերենի դասին նոր բառեր սովորելիս՝ «խանութների անունները» թեմայով, 5-րդ դասարանի աշակերտները ներկայացնում են փոքրիկ դերախաղ նոր բառերը կիրառելով հանրախանութում գնումներ կատարելու ժամանակ,

լուսանկարներ կամ պաստառ/հավաքածու կիրառել,

դատախաղ կամ բանավեճ նախաձեռնել և այլն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը

Պետք է գտնել բազմազան միջոցներ տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու համար, հատկապես համացանցը ինչպես նաև հեռուստաձրագրերը և զանազան հաղորդումները: Համակարգիչները և հատկապես Համացանցը մեծապես օգնում են օտար լեզուներ դասավանդելիս, օրինակ՝ հայտնի մարդկանց կյանքի մասին

տեղեկություններ իմանալու համար կարելի է կիրառել հարցերի ձևեր: Ուսուցիչը պատրաստում է կարճ թեստ հայտնի մարդու կյանքի մասին: Աշակերտները կատարում են թեստային աշխատանքը՝ որոնելով տեղեկությունները համացանցում: Թեստն ավարտելուց հետո ամբողջ դասարանը ստուգում է պատասխանները:Ըստ հաջորդ օրինակի՝ աշակերտները բաժանվում են խմբերի, ընտրում են այն գործչին, որի մասին նրանք ցանկանում են ավելի շատ տեղեկություններ իմանալ (ուսուցիչը կարող է աշակերտներին տրամադրել անունների ցանկ, որտեղից նրանք կարող են ընտրություն կատարել աշխատանքն առավել արագ և համակարգված կատարելու նպատակով): Նրանք կայքում որոնում են տեղեկություններ այդ անձի մասին և նրա վերաբերյալ կազմում են թեստ: Ի վերջո, նրանք տպում ենթեստերը, փոխանակում և փորձում են լրացնել դրանք: Թեստերը կարող են փոխանցվել մեկ աշակերտից մյուսին, և նրանք կարող են քվեարկել ամենահետաքրքիր կամ լավագույն թեստի օգտին:

Լրագրության ժանրերի կիրառումը

Օրաթերթի ստեղծումը աշակերտների մոտ զարգացնում է որոշակի կարողություններ և հմտություններ: Օրինակ՝ սովորողներին ասվում է, որ պատկերացնեն, թե օրաթերթի խմբագիր են: Իրենց խնդիրը թերթի համարներից մեկի հիմնական՝առաջին էջը ձևավորելն է:

Պետք է անցնել հետևյալ ընթացակարգով.

- թերթի համար անվանում ընտրել,
- ստեղծել առաջին էջի վերնագիրը,
- Նշել այս էջում ներառվելիք մասցած մյուս տեղեկությունները,
- որոշել էջում ներկայացվելիք հոդվածների տեսակը և դրանց տառատեսակը,
- նշել նկարների տեղերը, պատրաստել էջը՝ մշակած պլանի համաձայն:

Սահիկաշարքերի (slides) օգտագործումը

Շատ ուսուցիչներ օգտագործում են սահիկաշարքեր (slides) դասապրոցեսի ժամանակ: Յուրաքանչյուր սահիկաշարք պետք է ունենա սկիզբ, միջնամաս և ավարտ, տևի 15-20 րոպե: Օրինակ՝Անգլերենի դասի համար կարելի է պատրաստել սահիկաշարք «Անգլիայի տեսարժան վայրերը» վերնագրով:

Խաչբառերի լուծում

Խաչբառերի լուծումը պահանջում է մի շարք կարևոր հմտություններ և իհարկե գիտելիք, որոնք են բառիմաստի իմացություն, ուղղագրություն և այլն: Սովորողը նախ պետք է հասկանա տերմինները, ապա հասկանա պահանջը: Այլ կարևոր հմտություններից են ընտրությունները մեկնաբանելը, հետևություններ անելը: Այն նման է խաղի: Այն համարվում է ակտիվ ուսուցման ձև և շատ աշակերտների է ներգրավում դասապրոցեսի մեջ՝ զարգացնելով նրանց ակտիվ բառապաշարը: Օրինակ՝ անգլերենի դասաժամին հագուստների անունները սովորելիս ուսուցիչը կազմում է խաչբառ տրված նոր բառերով:

Լուսանկարների օգտագործում

Լուսանկարների օգտագործված զարգացնում է սովորողի երևակայությունը և ստեղծագործական միտքը: Կարելի է համացանցից վերցնել և յուրաքանչյուր աշակերտի մեկ լուսանկար տրամադրել: Սա հիմնականում կիրառվում է շարադրություններ և էսեներ գրելու ժամանակ, որի հիմքը լուսանկարն է: Նպատակն է զարգացնել նկարագրողական, վերլուծական և ստեղծագործական էսե գրելու կարողությունները: Օրինակ՝ 9-րդ դասարանում անգլերենի դասին ցուցադրվում են հայ ականավոր գործիչների լուսանկարները, որոնց հիման վրա աշակերտները բանավոր խոսք են կառուցում, կենսագրությունն են պատմում կամ գրում շարադրություն:

Ցուցահանդես դասարանում

Շրջագայությունը դասարանում և ցուցահանդեսի դիտումը հարստացնում է աշակերտների մտահորիզոնը, նպաստում է թեմայի լավ յուրացմանը:Սա գործնական աշխատանքի համար լավ և արդյունավետ միջոց է: Արդյունքում ստացվում է թեմային համապատասխան պաստառ կամ բացիկ: Սովորողները կարող են խմբավորվել ըստ թեմաների, որպեսզի իրենք նյութեր հայթայթեն տվյալ թեմաների շուրջ համացանցից կամ այլ աղբյուրներից: Երբ աշխատանքը պատրաստ է, յուրաքանչյուր թեմա ներկայացնելու համար ընտրվում են աշակերտներ: Օրինակ՝ 8-րդ դասարանում կազմակերպվում է ցուցահանդես, որի ժամանակ խմբերից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր պաստառը սիրելի տեսարժան վայրի մասին:

Ամփոփելով նշենք, որ վերոնշյալ ձևերը և մեթոդները կիրառելով, դասը կդառնա ավելի հետաքրքիր , ինչը կբարձրացնի սովորողների ուսումնառության հանդեպ ունեցած մոտիվացիան և ցանկությունը:

Գլուխ 2. Ինչպե՞ս ճիշտ կազմակերպել սովորողների համագործակցությունը օտար լեզվի դասերին, համախմբել տարբեր ընդունակություններով սովորողներին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ:

Համագործակցային-ինտերակտիվ դասեր կազմակերպելիս, անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների տարիքը, սեռը, արժեքային կողմնորոշիչները, հակումները, նախասիրությունները, ինչպես նաև լսարանի դիրքը, լուսավորությունը, տեխնիկական միջոցներով հագեցվածությունը, թույլատրելի աղմուկի առկայությունը և այլ ներուսումնական և արտաուսումնական գործոններ:

Ուսումնական պայմաններում խոսույթաստեղծ գործունեություն ծավալելու կարևոր պայման է նաև դասավանդողի վարպետությունը, խոսքի հնչերանգը, մեղեդայնությունը, դիմախաղը, լսարանում ազատ շարժվելու ունակությունը: Առանձնակի նշանակություն ունեն նաև կարճ, պարզ ու հստակ ձևակերպված հրահանգներն ու բացատրությունները:

Փոքր խմբերով աշխատանքի նկարագրությունը և նպատակ,

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել: Փոքր խմբերով աշխատանքն էապես մեծացնում է աշակերտների ակտիվությունը դասապրոցեսում: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է ուսուցման գործընթացին:

Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.

- զարգացնում է տարբեր բնույթի խնդիրներ լուծելու կարողություն
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգացնում է աշակերտի պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,

- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Խմբերը կարող են լինել ինչպես համասեռ, այնպես էլ տարասեռ: Համասեռ խմբերով աշխատելու պարագայում ուսումնական ձեռքբերումների միևնույն մակարդակ ունեցող աշակերտները աշխատում են իրար հետ: Առավել արդյունավետ է տարասեռ խմբերով աշխատանքը: Այս դեպքերում խմբերում աշխատում են ուսումնական հաջողությունների տարբեր մակարդակ ունեցող աշակերտներ: Փոքր խմբի չափը կարող է տատանվել 3-7-ի միջև: Առավել արդյունավետ են համարվում չորս հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Ըստ էության, չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը, և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից:

Եզրակացությունը

Ի՞նչ պետք է անի ուսուցիչը համագործակցային ուսուցում կազմակերպելու համար

1. Անհրաժեշտ է դասագրքի նյութը, դասապլանները, դասապրոցեսը, առաջադրանք ները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան:
2. Ուսումնական նյութը, ուսուցման մեթոդները՝ համապատասխանեցնել կոնկրետ առարկայի, կոնկրետ դասարանի կարիքներին:
3. Հաշվի առնել այն խնդիրները, որ կարող են առաջանալ առանձին աշակերտների միջև փորձելով միջամտել, կանխել հնարավոր ձախողումները, կոնֆլիկտները:
4. Հաշվի առնել սովորողների խմբային և անհատական պատասխանատվությունը:

Խմբային աշխատանքի պարագայում պետք է հաշվի առնել ինչպես ամբողջ խմբի աշխատանքի արդյունքը, այնպես էլ խմբի յուրաքանչյուր անդամի ներդրումը: Վերջինս հաշվի չառնելու դեպքում որոշ սովորողներ պարբերաբար «գլուխ կպահեն», ինչի արդյունքում համագործակցային ուսուցումը կձախողվի:

Համագոծակցային ուսուցման կարևոր միջոց է խմբային աշխատանքը, սակայն ուսուցչի համար շատ կարևոր է հասկանալ, որ փոքր խմբերը միշտ չէ, որ համագործակցային են: Աշակերտներին մի սենյակում նստեցնելը, մի խմբում ընդգրկելը, նույն առաջադրանքը տալը դեռևս բավարար չեն համագործակցային ուսուցման մասին խոսելու համար: Ուսուցիչները պետք է նկատի ունենան այն հանգամանքը, որ փոքր խմբերով աշխատանքներ կատարելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը փոքր է: Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված և արդյունավետ լինի խմբային աշխատանքը: Համագործակցային խմբի աշակերտները պետք է հասկանան, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին պետք է բնորոշ լինի թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելա- զույնը անելու ցանկությունը, արդյունավետ փոխկախվածությունն ու փոխկապվածութ յունը, սոցիալական փոխազդեցության

հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու և վերանայելու կարողությունը:

Համագործակցային ուսուցման ընթացքում առավել հաճախ հանդիպող սխալներ

Համագործակցային ուսուցման մեթոդները մանրամասն և գիտականորեն մշակված են: Բայց դրանց կիրառման ընթացքում երբեմն թույլ են տրվում սխալներ, որոնք հիմնականում կատարվում են ոչ մանրակրկիտ պլանավորման հետևանքով: Ստորև ներկայացնում ենք մի քանի բնորոշ սխալներ և դրանք կանխող առաջարկներ ուղղված համագործակցային ուսուցման բարելավմանը:

1. Խմբերը մեծ են:

   Աշխատեք փոքր խմբերով խմբի անդամների օպտիմալ թվաքանակը 3-5-ն է: Այդ չափի խմբերն ավելի արդյունավետ են աշխատում:
2. Աշակերտները պատրաստ չեն աշխատել համագործակցային խմբերով: Աշակերտներին բացատրե՛ք, թե ինչու եք համագործակցային ուսուցում կիրառում, կատարեք կարճ համագործակցային ուսուցման վարժություն, այնուհետև բացատրեք, թե այն ինչպես կարող է օգնել նրանց: Նախապես կատարեք մեկնարկային վարժանք:
3. Աշակերտներին չեն ուսուցանվել համագործակցային հմտություններ:

   Խնդրեք աշակերտներին մշակել խմբի վարքագծին վերաբերող կանոնների շարք: Օրինակ՝ մասնակցել հանձնարարության կատարմանը, ներդնել գաղափարներ, օգնել մյուսներին սովորել, ոգևորելով բոլորին մասնակից դարձնել, ուշադիր լսել, հարգալից վերաբերվել մյուսներին: Այնուհետև կանոնները գրանցեք պաստառին, փակցրե՛ք այն տեսանելի տեղում և հիշեցրեք աշակերտներին՝ կիրառել դրանք: Անհրաժեշտության դեպքում լրացրեք ցանկը:
4. Աշակերտների հետ՝ հազվադեպ են կատարվում համագործակցային վարժանքներ:

Յուրաքանչյուր խմբային քննարկման ընթացքում անհրաժեշտ է որևէ համագործակցային վարժանք կատարել աշակերտների հետ կամ, փոխարենը, խմբային աշխա-

տանքն ավարտելուց հետո նրանց հնարավորություն տալ քննարկելու, թե ինչ սովորեցին ընկերոջից:

5. Համագործակցային դասերը մանրամասն պլանավորված չեն:
6. Համագործակցային խմբերին տրվում են միանգամից բարդ առաջադրանքներ: Սկսեք կարճ, պարզ գործողություններից և զարգացրեք դեպի երկար և բարդ վարժություններ, քանի դեռ ձեր աշակերտները հաջողություն են ունենում: Կարևորվում է միայն արդյունքը, այլ ոչ թե դրան տանող ճանապարհը, այսինքն՝ խմբի ներսում հստակեցված չէ յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է դասը կազմակերպել այնպես, որ խմբի ներսում յուրաքանչյուր աշակերտ հստակ իմանա, թե ինչի համար է ինքն անհատական պատասխանատվություն կրում:
7. Հասկանալի չէ խմբային ուսուցման նպատակը: Խմբային ուսուցման հասկանալի նպատակը այն է, ինչը հեշտությամբ է չափվում: Օրինակ՝ դու քո աշխատանքը կարող ես համարել ավարտված միայն այն ժամանակ, երբ քո խմբի յուրաքանչյուր անդամ կկարողանա բացատրել խմբի կատարած աշխատանքը և/կամ պատասխանի ստուգողական հարցմանը:
8. Ուսուցչին թվում է, թե համագործակցային հմտությունները ինքնաբերաբար կզարգանան: Դուք պետք է սովորեցնեք աշակերտներին, թե ինչպես կոորդինացնեն իրենց աշխատանքը մյուսների հետ և յուրաքանչյուրն ունենա ներդրում ուսուցման մեջ: Դա արեք՝ օգնելով նրանց տեսնել հմտությունների անհրաժեշտությունը, ցույց տալով, թե ինչ անել՝ հսկելով դրա կատարումը, ապա հետադարձ կապի միջոցով՝ համոզվել, որ աշակերտների մոտ՝ համագործակցային հմտությունները կարող են դառնալ կենսաձև:
9. Տեսանելի չէ դեպի հաջողություն տանող դրական փոխհարաբերությունների հզորությունը:Խմբի յուրաքանչյուր հանդիպում սկսեք ձեռքբերածի կամ փոխհարաբերությունների կառուցման մասին հարցով, ինչպես, օրինակ. «Ինչպե՞ս է սովորում քո ընկերը, և սպորտային որ ձևն է նա նախընտրում»: Դեպի հաջողություն տանող դրական փոխհարաբերությունները կառուցել նախնական հաջողության վրա՝ տալով հեշտ հանձնարարություն, ապա

աստիճանաբար մեծացելով դրա դժվարությունն այնքան, մինչև աշակերտները միասին աշխատելու իրենց կարողությունների մեջ վստահության հասնեն:

10. Մանրամասն չի դիտարկվում խմբային առաջադրանքի կատարման ընթացքը: Եղե՛ք խմբերի մեջ, հարթեք թյուրիմացություններն ու պարզաբանե՛ք թյուրըմբռնումները, օգնե՛ք աշակերտներին հասկանալու և զարգացնելու լավ թիմային աշխատանքի հմտություններ: Մանրամասնորեն ուսումնասիրե՛ք խմբերը դիտարկումների միջոցով և ոգևորե՛ք նրանց: Օգնե՛ք խմբերին ապահովել յուրաքանչյուր անդամի վարպետությունը: Անհատներին զգաստ վիճակում պահեք՝ ասելով պատահական մեկին, «Ներկայացրու քո խմբի կատարած աշխատանքը»:

Խորհուրդներ ուսուցիչներին համագործակցային ուսուցում ճիշտ կազմակերպելու համար

- Առաջադրանքը պետք է հստակ ու պարզ ներկայացնել:
- Խումբը պետք է տեղեկացված լինի ժամանակային սահմանափակումներին:
- Խմբի և դասարանի աշակերտները պետք է միմյանց լսեն, եթե նույնիսկ համաձայն չեն իրար հետ:
- Խմբային քննարկումների ժամանակ ոչ ոք չպետք է իշխի մյուսների նկատմամբ:
- Խրախուսել մասնակցությունը և հարցերը:
- Թույլ տալ, որ աշակերտը խոսի:
- Քննադատել կատարումը և ոչ թե անձին:

Գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Ղրիմյան Ս., Բայաթյան Ն., Խաչատրյան Ս., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան 2006:
2. Ե. Երզնկյան, Մ. Պետրոսյան, Օտար լեզուները Հայաստանում, մաս 3, 2011,– 63 էջ:
3. Ա. Մանուկյան, Ինտերակտիվ մեթոդների կիրառման հիմսախնդիրն անգլերենի մասնագիտական դասընթացում:
4. Ուսուցչի ուղեցույց տետր: Օրվա դասի պլան Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան —Եր.: Զանգակ – 97, 2009, – 128 էջ:
5. http://www.teachervision.com/teaching-methods/resource

Lesson Plan

Grade: 6th

Topic: Meals and eating in restaurants

Goal: Through mostly speaking and listening activities, students will review vocabulary related to meals and will practice speaking as if they were ordering in a restaurant.

Objective: Students will learn basic phrases about ordering at a restaurant ad will create dialogues/role plays based on those terms.

Duration: 45 minutes

Motivation (12 minutes)	1. Review the names of the four meals (breakfast, lunch, dinner, supper). Write them across the top of the board 2. Read the text on p.71 "English Meals" out loud for the students with their books closed. 3. Split the class into four groups and assign each group a meal. Tell them that they have five minutes to come up with as many foods they can think of for each meal. Then, one member of the group should come up and write them on the board. 4. Present the following sentence construction: "Usually I have (food) or (meal)." Provide a few examples. (Usually I have eggs for breakfast./Usually I have bread for dinner.) Each student to share a sentence.	Materials Needed: -none
Information (10 minutes)	1. Ask students where people can eat a meal. The following terms: restaurant, café, bistro, canteen, etc. 2. Make a word web on the board with terms that go with "restaurant." Some terms might include menu, food, order, waiter, waitress, table, etc. 3. If you have one, show a video clip of people eating at a restaurant. Ask students to note any particular words or phrases they heard in the clip. If you do not have a video	Materials Needed: -restaurant video clip (optional)

	clip, simply present these terms through modeling and performance. Ask students to determine whether these statements might be made by customers or waters. : -What would you like eat? -Here you go. -I'd like... -I'll have... -will/would you bring...? -Do you have...? -Can you bring the check?	
Practice (5minutes)	1. Perform a dialogue for the class. Ask students to guess at the translation or to demonstrate their comprehension of the text after reading it. Dialogue: Waiter: Hello, what would you like to drink? Customer: I'd like water, please. Waiter: One moment. Here is your drink. Customer: Thank you. Waiter: What would you like to eat? Customer: I'll have spaghetti, please Waiter: I will bring it. Customer: Thank you. 2. Call at least two pairs of students to the front of the room to model it for the class as well.	Materials Needed: -dialogue (either on poster or written on the board)
Application (15 minutes)	1. Students should work in pairs to either adapt the dialogue or make their own restaurant dialogues. Each pair should perform the dialogue for the group.	Materials Needed: -dialogue
Wrap-up (3 minutes)	1. Ask students to report on what they learned in class that day. Each student should be able to say at least one new word or phrase	Materials Needed: -none

Lesson Plan

Grade: 7th

Topic: Sports

Goal: Through mainly reading comprehension, student will become familiar with five basic sports.

Objective: Students will work in groups to learn about different sports and the terms associated with them. They will make presentations to the whole group about what they learned.

Duration: 45 minutes

Warm-up (8 minutes)	1. Students should create a word web on the board based on the term "Sport." 2. After word web is complete, check the terms for spelling/relevance with thumbs up/thumbs down.	Materials Needed: -none
Information (15 minutes)	1. Put the class into 5 groups of 4-5 students. 2. Assign each group to a particular sport (football, volleyball, skiing, swimming, basketball). 3. Each group will have 10 minutes to complete group tasks. Task: 1. From the list, each group should select the verbs associated with their sport and design phrasal verbs when necessary based on that list: go, do, play, run, kick, catch, ski, swim, hit, throw 2. From the list, each group should select the equipment used with their sport. 3. Each group should answer the following questions regarding their sport: When? Where? What do you use? With whom (team/individual)? 4. After 10 minutes, each group should report for 1 minute on their findings.	Materials Needed: -Group vocabulary lists -Sports pictures -Equipment pictures

Practice (15 minutes)	1. The class should remain in their 5 groups of 4-5 students. 2. Give each group a reading passage. 3. Each group will have 10 minutes to complete group tasks Task: 1. Each group should read their comprehension passage about sports. 2. They should review the relevant vocabulary and translate the passage as necessary. 3. Each group should answer the comprehension questions in written from. 4. After 10 minutes, each group should report for 1 minute on their findings.	Materials Needed: -Reading comprehension passages and questions
Wrap-up (7 minutes)	1. Give group marks based on the work/effort they put into the assignment. 2. Ask for 1person from each group to share 1 thing they learned from another group	Materials Needed: -none

HANDOUT

Verbs: (circle all that apply)

Go

Do

Play

Run

Kick

Catch

Ski

Swim

Hit

Throw

Equipment: (circle all that apply)

Ball

Bat

Goal

Net

Weights

Stick

Questions:

When? (season)

Where? (location, i.e. outside, field, pool, etc.)

What do you use? (equipment)

With whom? (team or individual)

Ավարտական հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը անգլերենի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Վեներա Մնացականյան

Ուսումնական հաստատություն՝ Ջրաշենի միջնակարգ դպրոց

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

Փոխազդեցություն, փոխուսուցումը

Սովորողի ակտիվությունը

Համագործակցությունը

Հետադարձ կապը

Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցումը մի տեխնոլոգիա է, որի միջոցով գերազանց հաղորդակցություն է ձևավորվում սովորողների միջև և ստեղծվում է ակտիվ թիմային աշխատանք: Համագործակցային ուսուցումը կատարվում է փոքր խմբերով, որտեղ տարբեր մակարդակի աշակերտներ են մասնակցում:

Թիմային աշխատանքի շնորհիվ աշակերտները զարգացնում են միմյանց հետ շփվելու և հաղորդակցվելու կարողությունները՝ օտար լեզվի դասավանդման ամենակարևոր նպատակը: Թիմային աշխատանքը օգնում է յուրացնել համեմատաբար բարդ լեզվական նյութեր:

Դերախաղը՝ որպես ուսուցման ձև

Դերախաղն արդյունավետ ձև է, որը խրախուսում է աշակերտներին ստանձնել դերեր՝ փորձելով պատկերացնել, թե ինչ կանեին տվյալ դերում կամ իրավիճակում հայտվնելու դեպքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը

Համակարգիչները և հատկապես համացանցը մեծապես օգնում են օտար լեզուներ դասավան-դելիս:

Լրագրության ժանրերի կիրառումը

Օրաթերթի ստեղծումը աշակերտների մոտ զարգացնում է որոշակի կարողություններ և հմտություններ:Պետք է անցնել հետևյալ ընթացակարգով.

- թերթի համար անվանում ընտրել,
- ստեղծել առաջին էջի վերնագիրը,
- նշել էջում ներառվելիք մնացած մյուս տեղեկությունները,
- որոշել էջում ներկայացվելիք հոդվածների տեսակը և դրանց տառատեսակը
- նշել նկարների տեղերը, պատրաստել էջը՝ մշակած պլանի համաձայն:

Սահիկաշարերի օգտագործումը

Շատ ուսուցիչներ օգտագործում են սահիկաշարեր դասապրոցեսի ժամանակ:

Խաչբառերի լուծում

Խաչբառերի լուծումը պահանջում է մի շարք հմտություններ և գիտելիք, որոնք են՝ բառիմաստի իմացությունը, ուղղագրությունը և այլն:



Լուսանկարների օգտագործում

Լուսանկարների օգտագործումը զարգացնում է սովորողի երևակայությունը և ստեղծագործական միտքը:

Ցուցահանդես դասարանում

Շրջագայությունը դասարանում և ցուցահանդեսի դիտումը հարստացնում է աշակերտների մտահորիզոնը, նպաստում է թեմայի լավ յուրացմանը: Սա գործնական աշխատանքի համար լավ և արդյունավետ միջոց է: Արդյունքում ստացվում է թեմային համապատասխան պաստառ կամ բացիկ:

Համագործակցային-ինտերակտիվ դասեր կազմակերպելիս, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների՝

- Տարիքը
- Սեռը
- Արժեքային կողմնորոշիչները
- Դասարանի դիրքը
- Նախասիրությունները
- Հակումները
- Լուսավորությունը
- Տեխնիկական միջոցներով հագեցվածությունը
- Թույլատրելի աղմուկի առկայությունը

Փոքր խմբերով աշխատանքի նկարագրությունը և նպատակը

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել:



Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.

- Զարգացնում է տարբեր բնույթի խնդիրներ լուծելու կարողությունը
- Զևավորում է հաղորդակցման հմտություն
- Աշակերտները սովորում են միմյանցից
- Խթանում է թիմային աշխատանքը
- Զարգացնում է աշակերտի պատասխանա-տվության զգացումը
- Ընձեռում է ինքնադրսևորման հնարավորություն

Առավել արդյունավետ են համարվում չորս հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն:

Խորհուրդներ ուսուցիչներին համագործակցային ուսուցումը ճիշտ կազմակերպելու համար

Առաջադրանքը պետք է հստակ ու պարզ ներկայացնել

Խումբը պետք է տեղեկացված լինի ժամանակային սահմանափա-կումներին

Խմբի և դասարանի աշակերտները պետք է միմյանց լսեն

Խմբային քննարկումների ժամանակ ոչ ոք չպետք է իշխի մյուսների նկատմամբ

Թույլ տալ, որ աշակերտը խոսի

Խրախուսել մասնակցությունը և հարցերը

Ծնողական խումբ